Արտաքին գնահատում ՏԵՄՊՈՒՍ-ԳՈՎԵՐՆ ծրագրի շրջանակներում

2013թ.-ից հանրապետության մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններում մեկնարկած **TEMPUS-GOVERN** ծրագրի շրջանակներում իրականացվող շահակից բուհերի արտաքին գնահատման գործընթացն իր շարունակությունը ստացավ Հյուսիսային համալսարանում (հունվարի 25-26):

Համալսարան ժամանած փորձագիտական խումբը հանդիպում-քննարկումներ ունեցավ բուհի պրոռեկտորների, որակի ապահովման վարչության աշխատակիցների, վարչական կազմի, մասնագիտության կրթական ծրագրերի պատասխանատուների, պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների և ծրագրի աշխատանքային թիմի հետ: Երկօրյա այցի նպատակն էր գնահատել GOVERN ծրագրի շրջանակներում համալսարանի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման, բուհի ինքնավարության ու պատասխանատվության ընդլայնմանն ուղղված գործընթացները և ծրագրի արդյունքներն ու ձեռքբերումները: Գործընթացը համակարգվում էր Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) և Գերմանիայի բնական գիտությունների, ճարտարագիտության, ինֆորմատիկայի և մաթեմատիկայի որակի ապահովման կենտրոնի (ASIIN) մասնագետներ դոկտոր Միշել Մայերի և Լիլիթ Պիպոյանի կողմից (ՈԱԱԿ-ի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի մասնագետ): Փորձագիտական խմբում ընդգրկված էին նաև ազգային փորձագետ Սիրանուշ Խաչատրյանը ԳՊՀ-ից, եվրոպական փորձագետ պրոֆ. Ռիչարդ Կորֆը և մեկ ուսանող-փորձագետ Լևոն Հարությունյանը:

Հանդիպումների ընթացքում քննարկվեցին գերազանցապես հարցեր որոնք առնչվում էին անմիջապես ծրագրի տված ձեռքբերումներին, համալսարանի կառավարմանը, որակի ապահովման վարչության գործառույթներին, ինչպես նաև փորձագիտական խմբի դիտարկմանը ներկայացվեց նաև փաստաթղթերի այն ամբողջ փաթեթը որը մշակվել էր ծրագրի շրջանակներում:

Հանդիպումների վերջում փորձագետների կողմից ներկայացվեցին այն բոլոր դիտարկումները, որոնք արվել էին թիրախային խմբերի հետ քննարկումների արդյունքում: Համալսարանի ղեկավարությունը շնորհակալություն հայտնեց արդյունավետ և կառուցողական քննարկումների համար:

Ծրագրի շրջանակներում բուհի կողմից իրականացված ինքնավերլուծության և փորձագիտական այցի հիման վրա մասնագետների խմբի եզրակացությունը կներկայացվի բուհի ղեկավարությանը՝ ծրագրով որդեգրված բարելավման ուղղությամբ շարունակականությունն ապահովելու նպատակով:

Սյուզաննա Սարգսյան

Արտաքին կապերի բաժնի պետ